ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2024 թվականի N 381-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի N 968-Լ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 1167-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագրերը հաստատելու մասին» N 968-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագրում «2020-2023» թվերը փոխարինել «2024-2026» թվերով և «ծրագրերը» բառից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության առանձին գյուղական բնակավայրերի ցանկը» բառերով.

2) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել՝

1) երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2024-2026 թվականների ծրագրերը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության առանձին գյուղական բնակավայրերի ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի։».

3) որոշման հավելվածի վերևի աջ անկյունում «Հավելված» բառը փոխարինել «Հավելված N 1» բառերով և հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշումը լրացնել նոր՝ N 2 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 9-ի «Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրի իրականացման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 1167-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) նախաբանում «կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը» բառերը փոխարինել «Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը» բառերով.

2) հավելվածի 2-րդ կետում «2020-2023» թվերը փոխարինել «2024-2026» թվերով.

3) հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետում «միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերի» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի աջակցության» բառերով.

4) հավելվածի 5-րդ կետի 3-րդ ենթակետում «միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկելու» և «միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկվելու» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի աջակցության» բառերով.

5) հավելվածի 5-րդ կետի 5-րդ ենթակետում «միանվագ դրամական» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի» բառերով և հանել «, եթե բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները (N 1 ձև) նախարարությունն ստացել է մինչև շահառուի և կազմակերպության միջև համապատասխան պայմանագիր կնքելը)» բառերը.

6) հավելվածի 8-րդ կետի 1-ին ենթակետում «միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկելու» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի աջակցության» բառերով.

7) հավելվածի 9-րդ կետի 1-ին ենթակետում «5» թիվը փոխարինել «10» թվով.

8) հավելվածի 9-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերում «եռօրյա» բառը փոխարինել «տասնօրյա» բառով.

9) հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «երեխայի ծննդյան աջակցության ծրագրում ընդգրկելու» բառերը փոխարինել «Հիփոթեքի մարման աջակցության» բառերով.

10) հավելվածի N 1 ձևի վերնագրում և 1-ին կետում «Միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերի» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի աջակցության» բառերով.

11) հավելվածի N 1 ձևի 1-ին կետի 3-րդ ենթակետը «սերիան ու համարը» բառերից հետո լրացնել «, ամուսնության վկայականի էլեկտրոնային լուսապատճենը (առկայության դեպքում)» բառերով.

12) հավելվածի N 2 ձևի վերնագրում «Երեխայի ծննդյան աջակցության ծրագրի իրականացման» բառերը փոխարինել «Հիփոթեքի մարման աջակցության» բառերով.

13) հավելվածի N 2 ձևի 1-ին կետում «Երեխայի ծննդյան աջակցության ծրագրերի» բառերը փոխարինել «Հիփոթեքի մարման աջակցության» բառերով.

14) հավելվածի N 2 ձևի 1-ին կետի 2-րդ ենթակետը «շահառուի» բառից հետո լրացնել «և նրա ամուսնու (եթե առկա է գրանցված ամուսնություն)» բառերով, «հեռախոսահամարը» բառից հետո լրացնել «, ամուսնության վկայականի էլեկտրոնային լուսապատճենը (առկայության դեպքում)» բառերով.

15) հավելվածի N 3 ձևի 1-ին կետում «միանվագ դրամական աջակցության և կանխավճարի ապահովագրության ծրագրերում ընդգրկելու» բառերը փոխարինել «Մարզում հիփոթեքի աջակցության» բառերով.

16) ուժը կորցրած ճանաչել հավելվածի N 3 ձևի 1-ին կետի 7-րդ ենթակետը:

3. Սահմանել, որ 2023 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կանխավճարի ապահովագրության ծրագրում ընդգրկված շահառուների դրամական աջակցության վճարումը դադարում է այն պահից սկսած, երբ վարկի գծով վճարումների արդյունքում հիփոթեքային վարկի մնացորդային մայր գումարի և բնակելի անշարժ գույքի

արժեքի (վարկ/գրավ գործակցի հաշվարկման ժամանակ հիմք է ընդունվում անշարժ գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից նվազագույնը) հարաբերակցությունը հիփոթեքային պարտավորության ապահովագրման պահին կազմում է 70%-ից ցածր, բացառությամբ ծրագրային, այդ թվում՝ վերաֆինանսավորող վարկային կազմակերպությունների կողմից վերաֆինանսավորված և փուլային վարկերի, որոնց դեպքում դրամական աջակցության վճարումը դադարում է տվյալ ծրագրի իրականացման կարգով սահմանված՝ կանխավճարի ապահովագրման գործընթացի դադարեցման դեպքում:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի ծննդյան աջակցության ծրագրի շրջանակներում շահառուն դիմում է 2023 թվականին ծնված երեխայի ծննդով պայմանավորված աջակցություն ստանալու համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ